

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԻՍՐԱՅԷԼԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԱՐ ՊԵՆԻԱՄԻՆ ՆԷԹԱՆԻԱՀՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ ՆՈՐԻՆ ԱՄԵՆ. Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ

3 Յունիս, 2018-ին, Իսրայելի Վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Պենիամին Նէթանիահու պատասխան նամակ ղրկած է Նորին Ամենապատուութիւն՝ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր:

18 Յունիս, 2018-ին Իսրայելի Վարչապետ Տիար Պենիամին Նէթանիահուին յղած գրութիւնը ստորագրուած էր Երուսաղէմի՝ Հայ, Յոյն Պատրիարքներու և Սուրբ Երկրի Քիւսթոտին կողմէ, որու մէջ Հոգեւոր Պետերն իրենց մտահոգութիւնը յայտնած էին եկեղեցապատկան կալուածներու վերաբերեալ Իսրայելի Խորհրդարանին մէջ շրջանառուող նախագծին վերաբերեալ, որ շուտով պիտի ղրկուէր Նախարարներու Խորհրդի քննարկման: Նամակին մէջ Հոգեւոր Պետերը իրենց հիասթափութիւնը կը յայտնէին Վարչապետին, քանի որ Փետրուար ամսուն ան խոստացած էր նախագծին քննարկումը կասեցնել, սակայն տակաւին կը շարունակուէին քննարկումները Խորհրդարանին մէջ: Պատասխան նամակին մէջ Վսեմաշուք Վարչապետ կը հաւաստիացնէ Պատրիարք Սրբազան Հօր՝ թէ ինք թելադրած է յետս կոչել վերոյիշեալ նախագիծը քննարկումէն և յանձնարարած է նախարար Յախի Հանեկպիի հանդիպիլ Պատրիարք Սրբազան Հօրը՝ խնդրին լուծում գտնելու նպատակով:

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՆ ԴԷՊԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՄՕՐ ՏԱՃԱՐ

26 Օգոստոս, 2018-ին, կէս գիշերէն ետք ժամը 2:30-ին Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, Ժառանգաւոր սաներ և Սաղիմահայ ուխտաւորներ կատարեցին տարեկան ուխտագնացութիւն դէպի Աստուածամօր Տաճար, ուր Ս. Կոյսի Գերեզմանին վրայ մատուցուեցաւ մեռելոցի Ս. Պատարագ: Ժամարարն էր՝ Հոգեշնորհ Տ. Նորայր Վրդ. Գաղազեան:

ՏԱՐԵՄՈՒՏ ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

3 Սեպտեմբեր, 2018-ին, Դպրոցական շրջանի տարեմուտին Սրբոց Թարգմանչաց Վարժարանն ընդունեց 170 աշակերտ-աշակերտուհիներ: Տարեմուտի արարողութիւնը կատարուեցաւ առաւօտեան ժամը 8-ին, ներկայութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեանի և Միաբանութեան անդամներուն: Վարժարանի առժամեայ տեսուչ՝ Բարեշնորհ Նարեկ Սարկաւազ Աբրահամեանի բարեգալուստի խօսքերէն յետոյ, Սրբազան Հայրը ողջունեց ներկաները և քաջալերեց աշակերտները

ուսումնական տարին նոր եռանդով սկսելու, և պատուիրեց որ ամէն բանէ առաջ նախ սորվին մարդ ըլլալ և մարդ մնալ: Իր խօսքին մէջ սրբազան հայրը շնորհակալութիւն յայտնեց նախկին տեսուչ՝ Տ. Նորայր Վարդապետ Գազազեանի և իր ապագայ գործերուն յաջողութիւն մաղթեց: Ապա շնորհաւորեց նաեւ Նարեկ Սարկաւազը՝ իր նոր պաշտօնի ստանձնման համար և ուսուցիչները և մաղթեց անոնց համբերատար գործունէութիւն: Հանգիստութենէն ետք Լուսարարապետ Սրբազան Հայրը, հագեւոր հայրերուն հետ միասին պատուուեցան Տեսչարանին մէջ:

ՏԱՐԵՄՈՒՏ ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

5 Սեպտեմբեր, 2018-ին, առաւօտեան ժամը 9-ին, կատարուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի 175-րդ ուսումնական տարեշրջանի վերաբացումը: Վերամուտի արարողութեան ներկայ էին Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներ և ուսուցչական կազմը, գլխաւորութեամբ՝ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր: Ըստ աւանդութեան, Աւետարանէն «Սերմնացանի» առակը ընթերցուեցաւ, ապա Վարժարանի նորանշանակ Տեսուչ՝ Հոգշ. Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեանի բարի գալուստի խօսքերէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրը Ժառանգաւոր սաներուն քաջալերեց իր հայրական խրատներով ու բարի երթ մաղթեց: Իր խօսքին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը ըսաւ. «Բարի գալուստ կը մաղթենք Հայր Տաճատին, որ քաջութիւնն ու ազնուութիւնը ունեցաւ ընդառաջելու մեր փափաքին, դառնալու Տեսուչն ու Հոգեւոր Հայրը մեր Ժառանգաւորներուն և Ընծայարանի աշակերտներուն: Նոյնպէս յաջողութիւն կը մաղթենք մեր ուսուցիչներուն, ակնկալելով որ անոնք իրենց լաւագոյնը կ'ընեն իրենց ամբարած գիտութիւնը բոլորով սրտիւ ի սպաս դնելու այս յարկի աշակերտներուն»: Վարժարանի վերաբացումէն յետոյ Միաբանութիւնը և ուսուցչական կազմը պատուուեցան վարժարանի ուսուցչարանին մէջ:

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԻՍՐԱՅԷԼԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ ՏԻԱՐ ՅԱԽԻ ՀԱՆԵԿԱԿԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՄԻՋԵՒ

13 Սեպտեմբեր, 2018-ին, Իսրայէլի Արտաքին Գործոց Նախարարութենէն ներս տեղի ունեցաւ Իսրայէլի Տարածաշրջանային Համագործակցութեան նախարար՝ Տիար Յախի Հանեկապի և Երուսաղէմի հոգեւոր պետերու միջեւ հանդիպում: Պատրիարքութեանս կողմէ ներկայ էին Ս. Աթոռոյս Կալուածոց Տեսուչ՝ Տ. Պարեա Մայրագոյն Վարդապետ Երէցեան և Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վարդապետ Բաղդասարեան: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սուրբ Երկրի քրիստոնեայ համայնքներուն յուզող հարցեր, մասնաւորաբար Իսրայէլի Խորհրդարանին մէջ շրջանառուող եկեղեցապատկան կալուածներու վերաբերեալ օրէնքի նախագծի և եկեղեցապատկան կալուածներէ հարկեր գանձելու Երուսաղէմի քաղաքապետարանի որոշման մասին: Պրն. Հանեկապի հոգեւոր պետերուն յայտնեց, որ օրինագիծը յետս կոչուած է և պիտի չդրուի

քննարկման: Հաւանաբար նոր օրինագիծ մը պիտի մշակուի, որով եկեղեցապատկան կալուածները չեն վնասեր: Հարկեր գանձելու մասին Տիար Հանեկալի յայտարարեց, որ կը ստեղծուի երկխօսութեան ֆորում, այս հարցին քննարկման համար: Այս հարցին շուրջ Իսրայէլ արդէն սկսած է բանակցել նաեւ Վատիկանի հետ և հաւանաբար 2019 թուականին կը ստորագրուի համաձայնագիր մը, որու նման կը ստորագրուի ուրիշ համաձայնագիր մը եւս Սուրբ Երկրի քրիստոնեայ միւս համայնքներուն հետ: Պատրիարքութեանս ներկայացուցիչ հայր սուրբերը բարձրացուցին նաեւ Հայաստանէն ժամանող ուխտաւորներու մուտքի արտօնագրի (Visa) հարցը, որուն Տիար Հանեկալի դրական արձագանքեց:

